


բովանդակութեան մէջ եւ նա եպիս-
կոպոսական թեմեր կ'ընծայէ Մեծ Հայոց
կաթողիկոսին¹ :

Բոյորովին սխալ է հեղինակին այն վկա-
յութիւնն, որով կը հաստատէ թէ Հայաս-
տան մինչև Գաղղիոսի ժողովը կախումն
ունէր Կեսարիայէն² : Հաստատարալէս՝ բայց
նոյնչափ եւ հակառակ պատմութեան՝ կ'ա-
ւանդէ յոյն Պատմութիւնն (Διήγησις), թէ
Ս. Սահակայ ունկմամբը կամ զահրնկէց լի-
նելովը վերջացաւ Կեսարիոյ հայրապետաց
նախագահութիւնը³ : Այս ամբողջ գրութեանս
մէջ միակ կարեւոր եւ արժէք ունեցող բանն
է՝ կարգն կամ դասաւորութիւնն զահուց հայ
իշխանաց, որուն հեղինակը կը համարուի
նոյն ինքն Ս. Երեսէ : Սոյն յիշատակա-
րանս մի եւ նոյն աղբիւրը կամ ծագումը

ունի՝ ինչ որ ունէին Փաւստոսի մէջ գրա-
նուած կաթողիկոսաց ուղեւորութեանց պատ-
մութիւնը : Անտարակոյս պատմիչն աչքի առնե-
ունեցեր է այն գրութիւնը, եւ անոր վրայ
հիմնուած՝ իրեն տկար միջոցներով շարադրեր
է Երեսիոյ կենսագրութիւն մի : Իբր պատ-
մական աղբիւր բնաւ արժէք չունի այս գրու-
թիւնս այլ, ըստ որում Փաւստոսի հետ չի
համաձայնիր :

Մինչև ցարդ մեր բրած քննութիւններէն
եւ գիտողութիւններէն կրնանք եզրակացնել,
թէ առաջին ժամանակաց հայկական եկեղեց-
ւոյ պատմութեան համար միայն երկու ստու-
գիւ արժանահաւատ աղբիւրներ ունինք, որ
է Ս. Գրիգորի՝ վարքն Ազգաթնոցեղոսի գրե-
քին մէջ, եւ երկրորդ՝ Փաւստոսի պատմու-
կան երկասիրութիւնն :

Շաքայարեյի



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

(Տես յ'էջ 105)



Քեր. Տէթան անակնկալ մահուամբ
Վախճանեցաւ ի Պարսիս 1684 յու-
նուարի վեցին. ճիշտ այն օրը՝ յորում
սրտած էր մեկնիլ ի վիճակ եպիսկո-
պոսական պաշտամանն. եւ մայր եկե-
ղեցւոյն կանոնիկոսաց ժողովը կրկին հաս-
տատեց զԴր-Բոսէ ի պաշտաման փոխանորդի

ի նորոգ պարագութեան ամփոփոյն : Հայ տը-
պագրիչը՝ որոց համբերութիւնն ալ վերջին
ծայր հասեր էր սասը տարուան անպաղար
հակառակութիւններէն, յոյսերին դրած էին
Գեր. Տէթանի արդարաւորութեան եւ ընելիք
բարեկարգական ռահմանադրութեանց վրայ :
Իր մահը՝ եւ Դր-Բոսէի կրկին պաշտաման
բարձրանալը՝ գիրեցը յուսահատութեան մէջ
ձգեց, գիտնալով որ ինչ կերպով ալ շար-
ժին՝ անկարելի պիտի ըլլայ մոռնել ի շնորհ
եպիսկոպոսին Մարտիրոսի : Կրնային փո-
խարել զստպարանն թաղաւորութեան ուրիշ
որ եւ իցէ քաղաք մը, 1669ին արուած ար-
տօնապէրը կու տար իրենց զայդ իշխանու-
թիւն. բայց օրինաց խստապահանջութեան
յար մ'էր ի Գաղղիա : Հերետիկոսական մո-
լորութեան ամբաստանութեանց առակ, յորմէ

1. Յովհ. Կաթողիկոս (էջ 33, տպագր. Երեսու-
գեան, 1843) Հայոց ազգային եկեղեցական դասուն մէջ
կը քնէ Սեբաստիոյ, Մելիտանիայ եւ Մարտիրոսաց —
քաղաքին (Նիքիոյ) մետրապոլիտաները : Հեղինակն
թերեւ իրմէ ոգւում է :

2. «Այնք աղագաւ անունին ձեռնադրութիւն Հայք
ի Կեսարիա, մինչև ի ժողովն Գաղղիոսի» : Պատմ.
Ս. Երեսիոյ կաթողիկոսի Հայոց. Սոփ. Հյդ. Զ. էջ 31.
3. Combefis. hist. Monoth. ol. 289 «ի οὖν χαι-
ροτονία τῆς Ἀνατολῆς ἐκωλύθη ἐκ τῆς Καισαρείας
διὰ τὴν ἐπίστασιν τοῦ Ἰσαάκ». որ է. «Ձեռնադրու-
թիւնն Արեւելից բարձու ի Կեսարիայ անխաղաղ Սա-
հակայ :

յշողութեան արգարանալ իրենց կողմանէ յա-
ճախակի և ամէն օր կրկնուած ուղղափառ
դատութեան բողոքանօք, լաւ համարեցան
ապահովել իրենց զիրենց յարգունառատ
բարկութիւնէ, քան անոր պաշտպանութիւնը
միտանալով խնդրելու հարկին ենթարկուիլ,
յաշողութեան տարակուսանօք. ուստի և հե-
տեալաբար որոշեցին նոյն 1684 տարւոյն մէջ
թողուլ հետևանալ Մարտիրոսի և ի Գաղղիայ,
ուր լաւագոյն ժամանակաց մէջ կրկին պիտի
զառնային իրենց թոռնորդքը :

* *

Տասր տարուան մէջ (1674—1683), —
վասն զի այնչափ միայն եղաւ տպագրական
գործունէութիւնն յայնմ քաղաքի, — ի-
րենց ձեռքով հրատարակուած զրգեր քիչ ծա-
նօթ են և անով մանաւանդ աւելի հետաքրնա-
կանք, որ կ'օժանդակին մեզ ի տեղեկու-
թիւն պատմութեան տպարանի արուեստի ի
Գաղղիա, և կրօնական աշատութեանց յեօթն-
ետասներորդ դարու : Մատենադարանութեանց
մեզի նշանակածներն՝ ցարդ մեռաւսանք են
թուով, և որոց անուանքը՝ համառօտ նշա-
նակութեամբ պարունակութեանցն, մարթէ է
գտնել խնդրողաց ի ցուցակին, զոր Հանրքի
հրատարակեց, ըստ ցուցակաց զոր արդէն յօ-
րինաժէ էին Զրպետեան ուսուցիչ և Սէն —
Մարտին՝ Հայաստանի վրայ գրած յիշատա-
կարանաց հատորներուն մէջ : Բորի գաղղիա-
ցին կ'ըսէ, թէ մեր ամեն հետաքննութեամբն
և փութով՝ հատոր մի միայն կրցանք յաշո-
ղիլ յաւելուլ այս արդէն ծանօթ ցուցակին
վրայ, և որպէս խորագիրն է. « Գիրք Սաղ-
մոսաց Գաւթի, տպագրեալ ի տպարանի
սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրա-
վարի, խնամք և ծախիւք Սողոմոնի՝ քեռ-
որդոյ հանգուցեալ Ոսկանայ վարդապետի
երեսնեցոյ արքեպիսկոպոսի, յամի Տեառն
1677, յ'8 յունուարի, ի Մարտիրոս » :

Գնենք հոս Հանրքի ջուցակը՝ իր բուն
գաղղիական լեզուով, քաղելով Notice sur
l'origine de l'Imprimerie en Provence
մատենէն :

1°. Les Psaumes de David et l'Eu-
cologe arménien, avec l'ordre et le

régulateur de l'office divin, selon le
rite de l'Eglise d'Arménie; 1673.

2°. Les Psaumes de David avec
un abrégé de Calendrier arménien,
et la liste des noms de tous les Pa-
triarches d'Arménie, par ordre chro-
nologique; 1673.

3°. Entretien avec Dieu, ou livre
de prières composé par St. Grégoire
de Nareg, docteur de l'Eglise d'Ar-
ménie, dans le X. Siècle; 1674.

4°. Calendrier arménien en tab-
lettes, pour l'usage du peuple de ce
pays; 1675 :

5°. Abécédaire arménien, avec un
abrégé de grammaire italienne, expli-
quée en arménien; 1675.

6°. Les préservatifs de la santé;
1675.

7°. L'abrégé Géographique de Moïse
de Khorène, avec un recueil de fables,
connu chez les Arméniens sous le ti-
tre du Livre du Renard; 1676.

8°. La Géographie de Moïse de
Khorène; 1683.

Ասանք Գաղղիացոյն նշանակածներն են :
Մեզի ծանօթ տպագրութիւնք ստանուչորս
են թուով, զորս զնեմք հրատարակութեանց
թուականի կարգաւ .

1673. Գրգուկ կարեւոր. — Ժամագիրք
ատենի, Սաղմոսիւ. — Նարեկ (անկատար
մնացած) :

1674. Զ'արտասանութիւն 1675. — Ալբ-
բենարան. — Արուեստ համարողութեան. —
Պարզատոմար : 1676. Գրգուկ կարեւոր (եր-
կրորդ տպագր.) — Մաշաոց. — Նուագա-
րան եւստի : 1677. Սաղմոս : 1678. Ակն հո-
գեկան. — Պարտէզ : 1686. Ժամագիրք :

* *

Ազատ ու անկեղծ հիւրընկալութեան յի-
շատակն՝ զոր երբեմն վայելք էր յԱմսկերտամ
հայկական տպագրութեան վերանորոգիչն Ոս-
կան, յորպրամիտ ըրաւ զՍողոմոն միւս-
անգամ հոն փոխադրել իրեն տեսչութեան
յանձնուած գործատունը, ուր զերծ ամէն

հակառակութիւններէ և վերաքննութենէ, այդ քաղաքին մէջ օգնականութեամբ Մտաթէի վանանդեցոյ տպագրեց և կրկին տպարութիւններ ըրաւ զսնազան գրոց, համաձայն յարեւելից բերուած գրչագրաց :

Բայց այս խնդրոց և շփոթութեանց միջոցին՝ Եւրոպայոյ քանի մը քաղաքաց մէջ կը շարունակուէին այլևայլ տպագրութիւնք ընծայուիլ ի հայ լեզու : Ասոնց մէջ գլխաւոր կրնար սեպուիլ Հռոմայ Ուրբանեան վարժարանի տպագրատունն, ուստի՝ ինչպէս տեսնեց, արդէն տարիներ յառաջագոյն եղած էին քանի մը հրատարակութիւնք ի մեր լեզու, որոց գլխաւոր շարժառիթ և փափաքող կ'երևնայ մեզմէ այլ և այլ անգամ յիշատակուած Յովհաննէս Յակոբ ընդանդեան կամ Հոյով կոչուած վարդապետն, որ մերթ ի վերնետիկ կը գտնուէր, մերթ ի Ղիպոնոյ և ի Մարտիկոս, և յաճախացոյն ի Հռոմ : Եւ սուրբ Ժողովոյն ակնարկութեամբ և հաճութեամբ այլ և այլ թարգմանութիւնք ըրած է կամ ինքնազիր երկասիրութիւնք, և որ տպագրուեր են ի յիշեալ տպարանի Ուրբանեան վարժարանին : Ասոնք են 1671ին Ռուս ժիրանաւորին Manuductio (ի թարգմանչէն Ձեռքառնորէն կոչուած) գրոց տառաշին տպագրութիւն. երեք տարիէն (1674) Գեմբացոյն ընծայուած Նմանաբան գիրքը : Զտոռքէն հայկաբանութեան և Պօղոս Պարոմալի մէկ գրութեմը. ի նմին ամի նա և Ճտրտասանութիւն մը ի Մարտիկոս : Յետագայ տարիներուն՝ ցամա 1684, զանազան մանր մունր գրոց՝ տպագրութիւնք եղած են ի Հռոմ նոյն անշուք, և անհարթ տառիւք. և այն թուականէն ետքը առ ժամանակ մի գագրեր են նոր հրատարակութիւնք մինչև ի 1695. յորում եղած է և փոփոխութիւն տպագրական տառից՝ համեմատաբար ընտրելագունից փոխանակելով զհինան :

* *

Երբ Մարտիկոսի գործարանն փակուելու վրայ էր, 1677ին նոր տպագրատուն մի կը բացուի ի Պոլս. ուր ինչպէս կը յիշեն անշուշտ մեր ընթեցողք, Արքայ թոխաղեցի և իւր ընկերներն փորձ մը ուղեցին փորձել

ու շաշողեցան յառաջ տանիլ և Երկրորդ փորձ մ'ալ ուղեց ընել, բայց գրեթէ հաւատարանյալութեամբ, Երեմիա չէլէպի Գէօմիւրնեան, 1706ին նոյն Պոլս քաղաքին մէջ տպագրուած Յայնաւառք գրոց յիշատակութիւն մէջ՝ հրատարակչին Գրիգոր մարտուանցի կ'աւանդէ, թէ ինչպէս « հետորն Երեմիա չէլէպի Գէօմիւրնեանց՝ յառաջագոյն բազում Եանս և աշխատանս կրեցեալ էր փոսն գործարանիս և յառաջ ածեալ : Եւ տպագրեալ մասն փորձարանաց (կուգէ ըսել՝ փորձոյ) գրոյն՝ փոքրիկ տեսարկս երկուս » :

Այս երկու փոքրիկ գրքիկներն են, ինչպէս նոյն յիշատակագիրն կ'ակնարկէ « գովասանութեան իւրոյ յարմարեալ ի սուրբ տնօրինականացն Քրիստոսի. և միւսն տաղս գեղեցիկ » : յորոց երկուքէն ալ մէյմէկ օրինակ ձեռուընիս հասած են : Առաջնոյն մակագիրն է. « Տեղեաց տնօրինականաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ի սուրբ Երուսաղէմ և ընդ գաւառն : Զպատմագրարն սուշարեալ, զոր տեսեալ աէր Յովսէփ վարդապետ հրամանատար տեսուն Եղիազար կաթողիկոսի Երուսաղէմայ, կաւակցութեամբ տեսուն Սոքրիսա բարունակաւ տեղի տունն տպագրել ի փառս փրկագործողին Քրիստոսի և ի պարծանս ըրիստոնէութեան հաւատոյ : Երախայրեցուցեալ առ հոգեւոր տէրն. բնաբանիկ Պոլս. Տնօրինի թիւ 10 եղանակ » : Երեսուն և մի իջից մէջ բովանդակած քերթուած մի, հնգստասան պատկերօք տեղեաց տնօրինականաց յԵրուսաղէմ, զոր հեղինակն շարագրեր է ի 1665 : Իսկ երկրորդ հրատարակութիւնն է, ըսա խորագրին, « Գիրք որ ի մնացորդացն Յիսուս որդւոյ գրոյն Տեառն Ներսիսի Լլայեցոյ տնօրինեալ աստանօր իմն ի տպագրութիւն շնորհօք Տեառն որ ի ծնընդենէ Քրիստոսի Ռէ և Է. և ի Հայոց ՌՃ ի և Զ քառականք գոյ ի սեպուսներին և Գ դիպելոյ սակի. և զրուստ խաչին Յիսուսի, երախայրեցաւ ի փառս բարեբարութեանն : Եւ զցանկ գրոցս ի վերջն գացես. և կամեցելով ըս սիրեցելովդ զբանուցուս ով ուսուսնաւոր հոգիս փէսերի աղիւ Ասեւ ֆէմ նաւդիս Բերէնաի Ֆարիս » : Այս տառից մարք, ինչպէս բիւ յետոյ պիտի տեսնեմք, կ'անց-

նին ի ձեռս Գրիգորի մարտունեցոյ, և ըստ կարի բարորամամբ ձեռոց կը գործածուին ի տպագրութիւնս գրոց :

Նոր հայկական տպագրութիւն կը տեսնենք ի վենետիկ 1673ին, և այն ալ ազգայնոյ մը ձեռամբ, ինչպէս նախընթացաբար եղածներն, այլ Միքայէլ — Անգելոս Բարրոնի կոչուած իտալացոյ մը, որ անշուշտ շահագիտական նպատակաւ և կամ ի յորդորելոյ հալ բարեկամացը սկսաւ իր արդէն ունեցած տպագրատանէն հայերէն գրքեր ալ հրատարակել, և որոց առաջինն եղաւ, յամին 1678, Տակացոյ մը, ու երկու տարիէն ետքը Առետարանաց գիրք ի 1680 « տպագրեցեալ, ինչպէս կը նշակուի ի ճակատուն, հրամանաւ Սանիթօֆիցին », ինչպէս օրէնք և կանոն կը պահանջէր վենետիկոյ հասարակագետական իշխանութեան, կրօնքի և հաւատոց վերաբերեալ ամէն գրքերը՝ Հռովմայ Հաւատաքնութեան աստեղին ժողովոյն ի քաղաքին զտնուած գործակատարին հրամանաւ տպագրելն. 1685ին երկրորդ տպագրութիւն մ'ալ կը հրատարակէ Աւետարանին, աւելցրնելով նաև համաբարբառ ընկերացուածքը : « արդեամբք և գոյիւք ազուլեցի Մարտիրոսի որդի Սիսանին », և ի յիշատակարանին կը յաւելու, թէ եղած ըլլայ « բազում երկամբք և աշխատանք, վասն ոչ գտանելոյ գհամաձայնութիւն համաբարբառիցն, ի պատճառս անհպութեան զրաջն, քան զի մինչև ցայմ համաբարբառիւք աւետարան ոչ էր տպեցեալ երբէք՝ վասն դժուարութեանց զանապառնից թուոցն, մեք մասն պայծառութեան Հայոց յանձն առաք զամենայն դժուարութիւն, որպէս զի սփռեալ տարածիցի ի միջի ձերում » ...

Որոշակի բան մը չենք կրնար գրուցել թէ Բարրոնիի ձեռք ուստի ընկած են այս հայկական տառք, որք կամ ընկերացուցին են, և կամ ունիլ հաւանականաբար նոր փորագրութիւնք, և կամ ստանալով ի Հռովմայ, ուր թերեւս կը պահուէին. զի նոյն տառիւք ի Հռովմ տպուած կը գտնեմք յամի 1674 Պերոմալիի գիրքը : Բայց այս ստուերէն զատ՝ Բարրոնիի ընծայուած տպագրութեանց մէջ կը

գտնեմք նաև միջին չափով տառեր, որ անշուշտ իր ջանքովն ա ծախիւք փորագրուած են :

Ի նմին գործարանի տպագրուած է, նոյն 1680 թուականին, Հայեղի ճշմարտոգրեան կոչուած Յովհաննու Յակոբայ մէկ երկասիրութիւնն կամ Թարգմանութիւն. ու հետեւալ տարւոյն, 1684, համառօտեալ Ժամագիրք մը, ինչպէս ուրիշ մանր երկասիրութիւնք, որոց ցուցակը՝ ըստ թուոյ հրատարակութեանց կը գնենք ի վերջ մատենական, և որ կը շարունակէ գործել ցամն 1690, յորմէ և անոր կը զարդի անունն, և հրատարակած վերջին գիրքն կ'ըլլայ Խորհրդատեստը մը :

Բարրոնիի տպարանին նշանադրոյն՝ զոր կը գնէ ի վերջ իւր տպագիր մատենից՝ են իտալերէն barboni կոչուած երկու ձկունք :

Սակայն ի մէջ 1685 և 1687 թուականաց կը յիշատակուի ուրիշ իտալացի տպագրագետ մի, որոյ անունը՝ Յակոբ Մորետտի (Giacomo Moretti) կը գտնենք իտալական տառիւք նախ ի վերջ Սաղմոսարանի մի, և ի 1687 Պատասխանատոգրիւնք կոչուած և ի Յովհաննէ Յակոբայ շարագրեալ գրքին, նշանակելով զանուն հրատարակողին « առ Եւքրօնոյ Մօրէթթի » : Իրմէ զատ և ի մի և նոյն ժամանակի զգաղին ի վենետիկ հայկական տպագրական գործով և ազգայինքն մեզի յառաջադոյն ժառօթ թաղէս երէց Համազասպեան և Սահրատեան Նահապետ, մի և նոյն՝ 1687 տարւոյն իրարմէ անկախ կերպով :

Թաղէտ ի Լիւռնոյէ և ի Մարսիլիայէ կը փոխադրուի ի վենետիկ, աբ 1686 կը տպագրէ Խորհրդատեստը և զճաշոց գիրս : Շահրիմանեան մեծանուն և մեծահարուստ ընտանիքէն՝ Վուդայեցի Խոնայ Սահրատեանց տպարան մը կը բանան ի վենետիկ, որ ի ճակատու Խորհրդատեստին « նորակերտ » կը կոչուի, ճորտացեալ նորաձոյլ և վայելչածէ տառիւք, մեծ և փոքր, ծաղիկազօր, զարդագրուիւք և պատկերօք, յետ Ոսկանի՝ զլիաւոր պատիւ բերելով ազգային ճարտարութեան այս ճիւղին : Տպագրութիւն եղած է « արդեամբք և գոյիւք պարոն Գասպարին » :

Ի վերջ զոյոյն՝ յետ աւարաման մատուցման սրբոյ պատարագին՝ խորհրդակատար քահա-

նային բերանն կը դրուի, սովորական գտնութեան խօսքէն ետքը « Տէր Յիսուս ֆրիստու Աստուած ողորմեա ինձ : Եւ մատակարարի գործարանիս թաթէնսի էրիցու Երեւանեցոյ և ծնողաց նորին » : Անմիջապէս յետոյ դրուած յիշատակարանին մէջ կ'ըսուի. « Ի վախճանի աստուածային պատարագաւ մատուցի այսորիկ աղաչեմ՝ զտեարագ իմ անմեղապի լինել խրթնութեան նորատիպ տառիս և զեռաշէն գործարանիս, որովհետեւ անմեղայն իրաց սկիզբն պիտաւորութիւն է : Եւ զի զրախնայեմ, գրաւգլխն և գրաշարք անվարժ գոյով, հազիւ զայսքանս հնարել կարացին մեծի աշխատութեան մեզ առկիբ լինելով : Բայց յաւամ թէ այսուհետեւ ամենայն ինչ ամբողջապէս բնթանայցէ տառնց թերութեան : Այժմ՝ օգնութեամբ անառն սկիզբն արարաք ճաշոցին, որ թէպէտ գործիմն տաժանեցիկ է և զմուսորին մեզ գործաւ վարաց, բայց յոյժ վայելուչ ձեզ վայելուչ զացք թէ բառ ձեռն և թէ բառ ճոխութեան : Զոր և հաւատամ թէ հաճեի լինելոց իցէ ի փառս ֆրիստուի և ի պարծանս ազգին մերոյ և ի գովեստ Սրբազան Հայրապետին Տեառն Եղիազարու, և յիշատակ անշնչելի տանն Սահրատեան : Արդ որ վայելէք զսա՝ յիշեցէք յաղօթն զպարոն Գասպարն, և զնորարդորը՝ որդիս նորին Աղայ Ստեփանն, Սահրատն և զԲարսեղն » : Ետոյ երոպակառն տառիք և թուականքն : In Venezia, M. DC. LXXI. Per Giacomo Moretti. Con licenza de' Superiori. Ի տալացի տպագրատեան անունն կամ անոր համար դրուած է՝ որ իր գործարանէն հրատարակուած է, և կամ աւելութեան որինաց ձեռնագրութեան պահանջանաց համեմատ : Իսկ տպագրուած գիրք, զուտ հայկական կերպարանքով է, առանց կրելու յինքեան նախընթաց տպագրութեանց մէջ ներմուծուած փոփոխութիւններն :

Իսկ ճաշոց գրոց համար կ'ըսուի ճակատումն թէ տպագրութիւն եղած է « ներքաւ պարտում » ճուղայեցի խոնայ Սահրատի որդի պարոն Գասպարին, և թաթէնսի էրիցու Երիւանեցոյ Համազասպան » : Որով կրկին անարք տպարանին կը նշանակուին. և թա-

ղեռս երէցն ոչ լոկ իւր նիւթական գործակցութիւնն կ'անենայ, այլ և դրամական ծախուց մասնակցութիւն : Ի գլուխ գրոցն ընծայական մը դրուած է ի Համազասպեան էրիցուէ առ սրբազան կաթիղիկոսն Եղիազար, յորում կը պատմէ թէ ինչպէս ի Սպահան գտնուած ատեն յայտներ է իւր փափաք հայկական գրոց նորանոր տպագրութեան առ ազնուատում Սահրատի որդի Գասպարն, և խոստումն ընդունած իրմէ դրամական նպաստի. որոյ վրայ յաւելլով նաև իր քիչ շատ ունեցածը, կը ճանապարհորդէ ի Մարտիիս, ուր էր յայնամ Ռական վարդապետ, և իր բացած տպարանն : Եւ ուր Ռական, և իր ընկերակիցը և ազգակիցք՝ զնա ինքն թաղեռս կը համարին ոսկանեայն տպարանին աւերման և քայքայման պատճառ, Երեւանեցիին կ'ըսէ. գտանելով զտպագրատան առնէ տապաւնեալ և ի նպատ քայքայեալ և աւերեալ, դարձաւ ի վէնեաթիկ : Ինչն բերելով « զկատարեալ իմն տօնացոց » ի գիտնոց արանց սրբազրեցեալ և զգուշապէս զաղափարեալ. և զերկուս և զերիս ճաշոցս՝ հարուստ և ճոխ, մեծաւ հնարիւ աստի և անտի հազիւ ի ձեռս արիեայն : Բայց անհամեմատ և անբաղդատս յիմեանց թէ՛ ընթերցուածութիւն և թէ ազօթիւք աւերանականացն տօնից » : Եւ երբ տարակուսանաց մէջ էր թէ որուն համեմատ արծան է որ ընէ իր բնտրութիւնը տպագրութեան համար, ըստ բաղդի ձեռքն ընկաւ հոն ի վէնեաթիկ « ճաշոց իմն վաղեմեան » ամբողջ և անթերի, ի գանձուց հոց թագաւորացն Հայոց », զոր համեմատելով Աստուածաշունչ մատենից հետ, ընթերցուածութիւնն ամենեւին համեմայն գտաւ զայն : Ուստի վստահութեամբ երկու անասիք նուրակերտ տառից փորագրել առաւ, մին մեծ և միւսն մանր խորագրոց գործածութեան. և տպագրատան կարեւորքն հոգալով, տպագրեց նախ զԽորհրդատեար, զոր յիշատակեցինք, տպա ճաշոց գիրք, ամենայն հնարաւոր ճոխութեամբ զարդուց, ծաղկազորց և պատշաճական պատկերաց : Հոն ի վէնեաթիկ գտնուեցաւ նա և Յովսէփ սմէ կոչեցեալ արքայիսկապոն Զմիւռնիոյ, որոյ խորհրդակցութեամբ և հաճութեամբ վարակեցաւ թաղեռս՝

իր այս մեծ և բազմաձախ ձեռնարկին մէջ, որ իր թերութեամբն ալ նկատմամբ տպագրական ուղղութեան, մեծ պատիւ կը բերէ իր անվերջը ջանքեր և Սահրատեան տպարանին: Իրեն ժողովրդայն բռնած սկզբնապիւն վրայ՝ հետեւեալ տողերը քաղենք ոստանաւոր յառաջաբանէն, որ անմիջապէս առ էրիազար կաթուղիկոս ուղղուած ընծայականէն ետք դրուած է. « Եթեանկէ գաղափարեալ՝ — Որ յարգայից էր յորինեալ, — Ի կրիկիոյ զանաւ ամբարեալ, — Եւ ըզմատեանն անտի բերեալ: — Վաճառականը մեր մի եղեալ, — Որք ի կըզգու յայսմիկ բնակեալ, — Զխորհուրդ բարի յառաջ արեալ, — Եւ ըզմատեանն անտի բերեալ: — ... Արդ ըզգիրքն զայն մինչ մեր տեսեալ, — Յերկնից պարզեւ զոլ համարեալ, — Մեզ գաղափար պատհի ընտրեալ, — Զգուշաբար նըմին հետեւեալ »: Գործոյն ընթացից մէջ տեղ աեղ դրուած համառօտ յիշատակարանը, երբեմն նա և ոստանաւորը, կը յանձնեն յիշել զթաղէնս՝ մատակարար զնա կոչելով գործարանին և զծնողս նորա:

Երկու եկեղեցական զբերէր զատուրիչ տպագրութիւն չենք գտներ թաղէի ձեռքով եղած, ոչ հոս ի վերինտիկ և ոչ այլ ուրեք: Բայց նոյն Սահրատեան տպարանէն ի լոյս կ'ընծայուի ի յետագայ 1687 ամին համառօտ հոգեւորական զբոյնի մի, Խոկոմն քրիստոնէական, Թարգմանութեամբ Յովհաննես Թակոբայ. որոյ երկասիրութիւն է նաեւ Պարգաբանութիւնը Սաղմոսաց, որ ի մի և նոյն ամի կը տպագրի ի վերինտիկ, ի հայկական մասնաւոր տպարանի, զոր իւր տուն մէջ կը հաստատէ Նահապետ օմն ազգային վաճառական ազգուցի: Այս անձին, ինչպէս նաեւ գործարանին և վերեսիոյ մէջ տեսնեցած պարտպանաց վրաց արդէն ուրիշ առթով գրուած է լիւրի, յորմէ համառօտելով քաղենք հետեւեալ մասերը, որ մեր նիւթին կը վերաբերին:

Արդ Պարգաբանութիւնը Սաղմոսաց կուշուած զբոյն ճակատուն և յիշատակարանին մէջ կ'ընթերցուի թէ ինչ առթով և որմէ ձեռքով եղած է Թարգմանութիւն և որոյ ջանիւք տպագրութիւնն, որ և համառօտու:

Թիւն մի կրնայ համարուիլ զորոց տպագրութեանը պատմութեան: Արդ է « Պարգաբանութիւն սաղմոսացն Գաւթի մարգարէի. ժողովեցեալ ի զանազանից մատենից վարդապետաց եկեղեցւոյ, և Թարգմանեցեալ... ի նուառ Յոաննիսէ վարդապետէ կոստան, զինուպոյնեցւոյ... Եւ տպագրեցեալ արդեամբք և զոյիւք ազգուցի խօնայ Գուշապարի որդի խօնայ Նահապետին, ի սեփականի — տան իւրում, ի թուականութեան մերում ՌՃԼԵ »: Աւելցնելով ապա և յիտալական լեզու. In Venezia, per Naabiet de Gulnazar, 1687. Con licenzia de' superiori e privilegio »: Ի յիշատակարանին ալ կ'աւանդէ... « ... Եւ զկարողութիւն պաշտօնէիցս ի բազմավիշտ և ի յոգնալուանգ ժամանակիս հատուցանել ի կտար և ի վախճան զքաղցրանուագ և զհոգեյորդոր Պարգաբանութիւն Սաղմոսացն Գաւթի մարգարէի, ի թուականութեան մերում ՌՃԼԶ. սեպտեմբեր ամսոյ Ժ. ի վերինտիկ քաղաքի: Արդ որ վայելէք զսա առողջութեամբ ի շնորհ Տեառն, յիշեցէք ի սրբազան աղօթս ձեր զԱզգուցի խօնայ Գուշապարի որդի զխօնայ Նահապետն. ընդ բնաւից ծնողաց և ազգականաց նորին հանգուցեցոյ ի Գրիստոս. որ ազգեցեւորութեամբ Հոգւոյն սրբոյ և յորդորմամբ բարեպաշտից օմնաց մերազնեաց՝ եմուտ ի գովելի գործառնութիւնս այս. և մեծաւ հպարտութեամբ յառաջեցոյց զԹարգմանութիւն և զտպագրութիւն սորին. վառնելով զզոյս և զինչո բազումս ի ձուլումն զեղեցիկ տառիս, ի շնորհն նորակերտ տպարանիս, ի գլխումն պատուական թղթոյս, և ի յօրինումն ամենայն իրաց պիտանաւորաց յայսմիկ նուազեցելովմ տմի, յորում համայնք առեւտրութիւնը զոն խանգարեցեալք. առ ի թողուլ զյիշատակ իմն անջնջելի զինի ինքեան ի խրախմանս հանուրց Հայկազունեաց... Երեւցէք ևս... զԱզգուցի մղտու Աստուածատրի որդի զպատաւորն իմ զԹովմայն. որ ամենայն ջանիւք անձանձիր աշխատեցաւ ի տպագրատանն և օգնեաց ի սրբապրութիւն սորին. և ձեռնառեւ եղև միշտ Յովհաննէս վարդապետին... »:

Սաղմոսաց Պարգաբանութիւնն առաջ,

1683ին, Յովհաննէս վարդապետ յիտալական լեզու թարգմաներ, ու հայերէն բնագրին հետ տպագրեր էր ի պրոյմատան Միքայելի Բարսեղի իտալացւոյ, որոյ յիշատակարանին մէջ կը նշանակուին անուանք « Արձանացոցոյց գրոցս. և մանաւանդ Աղուէցի Նահապետին »:

և Զուգայեցի Ղարաաշենց պարոն Անտոնին », որով կ'երեւնայ թէ այն թուականին իրեն յատուկ տպարանը չունէր Աղուէցին Նահապետ, որ և իր երկրաւոր կեանքը կ'ընած է 1694 տարւոյն վերջին օրը:

Շարայաբոյի

ՅՈՐԴՈՐ ԱՏԵՆԱԿԱՆ ԱՌ ԱՒԱԿԱՆՈՒՆ

ԵՂԻՍԱՐԷԹ ՔԱՂԱՔԻ

ՎԱՍՆ ԿԱՆԳՆ ԵՂՈՑ ԶԴՊՐԱՏՈՒՆ Ի ՔԱՂԱՔԻ ԱՆԴ

(Շարունակութիւն, տես յէջ 153)

— 12 —

ՀԱՆԳԱՄԱՆՔ ԴՊՐԱՏԱՆ

Հանգամանօք դպրատան իմանամբ նախ՝ զայն, զոր պարտի ռնել դպրատունն, կամ զայն՝ որ պարտի լինել ՚ի դպրատան. այսինքն են՝ բնակութիւն և բնակիչք, քահանայք և մանկունք և ծառայք, և հասք վասն նոցա: Երկրորդ իմանամբ զայն, որ զործի ՚ի դպրատան ըստ որոշեալ ժամու. այսինքն՝ թէ ե՞րբ յառնել, ե՞րբ ուտել, ևն. և թէ ըստ աւուր պատշաճի զի՞նչ պարտ իցէ առնել: Երրորդ՝ իմանամբ զայն, որով պահանքի ՚ի կեանս. այսինքն է՝ ուտել և զգէ, նուլ, և այլն: Զորրորդ՝ զայն, առ որ կարգի, այսինքն՝ թէ զի՞նչ ուսուցանէ, օրպէս և օրպափ. զի այս է այն՝ առ որ կարգի, և այս է նորա նպատակ և վախճան:

ՀԱՏ ԱՌԱՋՆՈՑՆ

ա. ի դպրատան Եղիսաբէթ քաղաքի պարտի լինել բաւական տեղի անդորր բնակութեան մանկանց և ուսուցչաց:

Բնակել և ննջել մանկանց՝ պարտի լինել չորս կամ հինգ ՚ի միում սենեկի՝ աւելի կամ պակաս, իսկ ուսուցչաց՝ առանձին:

Ընդ մէջ մահճաց մանկանցն պարտի լինել խորոց տախտակամած, նոյնպէս և առ ոտամբ ըստ ձեւոյ (սահմանելոյ):

բ. ի դպրատան պարտի լինել տեղի խօսակցութեան հիւրոց, ուր և ծնօղք մանկանց կամ ազգականք և կամ բարեկամի նոցին անդ նստցին և անդ խօսեցցին, և մի ի սեռեանս նոցա:

գ. Այս խօսակցութիւն մանկանց ընդ արտաքինսն՝ երիցս և կամ առ առաւելն չօրիցս լիցի յամենան, և այն՝ յաւուրս հանդարտութեան, որ է՝ հինգշաբաթի և կիսակէ:

դ. Պարտի լինել ՚ի դպրատան և որոշեալ տեղի վասն հիւանդաց, զի ՚ի տկարանալ արուք անդր փոխադրեցցի, և մի ի կատարաւաց ունիցի զհոգ նորա. և երկու ՚ի մանկանց կարասցեն խօսակցի լինել ընդ նմա հրամանաւ մեծաւորին: Իսկ ՚ի ծանրանալ հիւանդութեանն եթէ կամք իցեն ծնօղաց, տարցին ՚ի առնս խրեանց:

ե. Պարտին լինել ՚ի դպրատան երկու կամ երեք քահանայք հայք ՚ի կարգէ սրբոյն Անտոնի աբբայի՝ որ ՚ի վէհեմտիկ. մին՝ իբր մեծաւոր, և այլքն՝ իբր կառավար և ուսուցիչ և հոգեւոր զատեմարակ՝